ցեալ կնոջ պատմութիւնը, որ նոյնպէս աւետարանի անվաւերական կտորներից է, ինչպէս յայտնի է չկայ մեր հին ձեռագիրների մէջ և նորերի մէջ Յովհաննու աւետարանի վերջն է բերած միշտ։ Գործածական տպագրութիւնները և նորագոյն ձեռագիրները՝ լատիներէնի ազդեցութեամբ այս հատուածը դնում են Ը. գլխի սկզբում։

Կ. Ղ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

1. ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիների միութեան խնդրի վերաբերութեամբ Վատիկանում կարծիքներն սկսել են տարբերուիլ, ինչպէս լրագիրներն հաւատացնում են, այդ խնդրի իրագործուելուն բացի պապից ուրիշ ոչ ոք չէ հաւատում։ Մինչև անգամ պնդողներ կան, որ պապի այդ ջերմ ցանկութեան հակառակ են բարձր եկեղեցականներից շատերը։ Զը նայելով այս հակառակութեան պապը հետզհետէ իրագործում է «բնական պարբերութիւն» ժողովի վճիռները և նորանոր հնարքներ է մտածում սուրբ Պետրոսի փարախը լայնացնելու։

Ինչպէս տեղեկանում ենք կաթոլիկ «Italie» թերթից, Կ. Պոլսում հիմնուելիք հոգևոր դպրոցը պէտք է մի տեսակ հոգևոր [illegible] լինի, ուր հնար ունենան յունածէս լատին քահանայք ներքին ու արտաքին գիտութիւններն ուսումնասիրելու։ Այս համալսարանին կից պիտի պահպանուի և մի միջնակարգ հոգևոր դպրոց (սեմինար) իբրև նախակրթարան։

Այս հոգևոր դպրոցին և համալսարանին կից Հռովմի քահանայապետը մտադիր է և մի փառաւոր [illegible] կառուցանել, ուր յունական ծիսով պիտի պաշտօն կատարուի, որպէս զի արևելցուն այնքան սիրելի արտաքին ծէսերի փառաբանութեամբ գրաւուին շատերը։

Հռովմայ պապն առաջարկել է Թրայմի Լանժանիէ արքեպիսկոպոսին մի ֆրանսերէն թերթ հրատարակել միութեան խնդրի քարոզութեան համար։ Այս առթիւ ռուս հոգևորականներից մէկը ճիշդ նկատել է, թէ արդարև պապն առաւել յաջող միտք կարող չէր յղանալ, որովհետև ոչ մի տեղ միութեան խնդիրն այնքան ոգևորուած պաշտպաններ կարող չէ ունենալ, որքան ֆրանսիական հոգևորականների մէջ և դարձեալ թէ արևելեան քրիստոնէից (յոյների, ռուսների, սերբերի և մանաւանդ ռումենացիների) համար ամենայն ինչ որ Ֆրանսիայից է գալիս, գրաւիչ է։

Միութեան խնդրի ամենից եռանդուն քարոզիչները գործում են Ասորիքում, Պաղեստինէում և Արաբիայում, ուր յունադաւան ժողովուրդը տըգիտութեան խաւարումն է խարխափում։ Այս քարոզութեան առաջն առնելու համար Պաղեստինէի ռուսական ընկերութիւնը մի արաբերէն տետրակ է հրատարակել, ուր պապական միութեան առաջարկները միառմի առաջ են բերուած և հերքուած։

— Ցիսուսեան կրօնաւորների թիւը մի ամբողջ բանակ է կազմում։ անցեալ տարուան վիճակագրութիւնից երևում է, որ այդ միաբանութիւնը 14,000 անդամ ունի այժմ։

— Մինչդեռ Հռովմայ պապն աշխատում է արևելեան քրիստոնեաներին իւր իշխանութեան տակ առնել, արևմուտքում հետզհետէ կորցնում է իւր ազդեցութիւնը։ Անցեալ տարի ֆրանսիական կառավարութիւնը հարկի ենթարկել կամեցաւ հասարակական հաստատութիւններից և [illegible] հիմնարկութիւնները։ Մասոնականութիւնը, որ հակառակ է ոչ միայն կաթոլիկութեան, այլ նաև քրիստոնէութեան առհասարակ, Ֆրանսիայում 285 համայնք ունի, որ մօտաւորապէս կունենայ 28,500 անդամ։ Այդ ընկերութեան անդամ են գրուում բացառապէս կրթուած դասակարգից, ուստի և վերոյիշեալ թիւը մեծ տոկոս է իսկապէս։ Ֆրանսիական կառավարութեան առաջաւոր անդամները մասոններ են։

— Փարիզի եկեղեցիներում վերջերս շփոթն ու գայթագղութեան դէպքերը բազմանում են։ Մեծի պահոց օրերին Կլինեանկուրի սուրբ Աստուածածնի եկեղեցում յայտնի քարոզիչ Հարնիէն քարոզում էր «անառակ որդու» մասին։ Շատ մեծ էր ունկնդիրների բազմութիւնը, որոնք ամենայն հանգստութեամբ մինչև վերջը լսեցին, սակայն երբ քարոզիչը խօսքը դարձրեց նորագոյն հասարակական «անառակ որդոց» վերայ և յորդորեց յետ դառնալ հայրենի տունը և ապաշխարել, այնպիսի շփոթ և աղմուկ բարձրացաւ եկեղեցում, որ հնար եղաւ միայն ոստիկանութեան միջամտութիւնով հանգստացնել։

— Լևոն ԺԳ. պապը իւր 17-ամեայ քահանայապետութեան ընթացքում 100 ծիրանաւոր է թաղել, որոնցից 90-ին ինքն է այդ աստիճանը տուել։ Աշխարհիս երեսին եղած բոլոր ծիրանաւորներից մեծագոյն մասը իտալացիք են (63 հոգուց 38), ինչպէս ենթադրում են Լևոն ԺԳ-ի յաջորդն էլ այդ

ազգից կը լինի և իբրև թէ ինքը պապն արդէն մատնանիշ է եղել Բոլոնիոյ ծիրանաւոր-արքեպիսկոպոսի վերայ՝ որ բոլոր ծիրանաւորներից երիտասարդն է (56 տարեկան)։

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Վիէննայի Մխիթարեան միաբանութեան կողմից հետևեալ շրջաբերական ծանուցագիրն է ուղարկուած հայ խմբագրութեանց։

Գեր. Ամեն. Արսէն Արքեպիսկոպոս Այտնեանի Քահանայութեան եւ ուսումնական կենաց 50—ամեայ Յոբելեանի պատրաստութեան համար՝ Վիէննայի հայ գաղթականութեան ամենահին անդամներէն վաճառատանց տեարք՝ Պ. Գր. Ճերմակեան՝ Պր. Պետրոս Շիշմանեանս Պր. Զ. Բոբրովիչ՝ Պր. Յովհ. Վարդապետրիկեան՝ եւ Մխիթարեան Հայրերէն՝ Վ. Հ. Միքայել Վ. Թուրշյեան՝ Վ. Հ. Գր. Գալէմքեարեան եւ Վ. Հ. Բառնաբաս Վ. Պիլէզիկճեան Ցանձնախումբ մը կազմած են եւ արդէն այլեւայլ առաջարկութեանց՝ Պր. Զատիկ Բոբրովիչ առաջարկեց՝

«ԱՑՏՆԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱՆԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ» անուամբ հաստատութիւն մը կազմել՝ որուն գործն ըլլայ վարչական ժողովոյ մ՝առաջնորդութեամբ արևելքէն՝ (Ցաճկաստան Ռուսաստան՝ Պարսկաստան եւլն.) հայ աղքատ պատանիներ վիեննայ բերել տալ՝ եւ այստեղ պարզ ձեռագործ արուեստներ սորվեցընել 3—4 տարի՝ եւ վարպետ հանելէն ետեւ վերադարձընել։ Ցանձնաժողովն այս առաջարկութիւն ազգին արուստգիտական եւ նիւթական զարգացման շատ օգտակար՝ եւ հայ հասարակութեան սրտին շատ մօտ գտնելով ընդունեցաւ՝ եւ սկսաւ կազմակերպութեան վրայ խորհիլ եւ առանձին կանոնագրութիւնը կազմել։

2. ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ.

Ցունաց պատրիարք Անթիմոս Է. սուլթանից սիրալիր ընդունելութիւն գտնելուց յետոյ արժանացել է նաև նորահաստատ պատրիարքներին սովորաբար տրուող շնորհին՝ նա ստացել է Մէջիդէյէի առաջին կարգի շքանշանը։

— «München. Allg. Zeit». հաղորդումէ Կ. Պոլսից՝ որ նորընտիր պատրիարքից գոհ չեն իւր ընտրողները՝ որոնք յոյս ունէին՝ թէ նա դիւրաթեք գործիք կը լինի իրենց նպատակներին։ Հակառակ Կ. Պոլսի յոյն սինոդական հարց սպասածին Անթիմոս պատրիարքը մեծ եռանդ և ինքնուրոյն գործունէութիւն է ցոյց տալիս՝ որ յայտնի կերպիւ ուղղուած է նոյն իսկ իրենց սեփական նպատակներին և ձրգտումներին հետևող սինոդական հարց և քաղաքական ժողովի աշխարհական անդամների դէմ։ Կ. Պոլսի կաթոլիկ թերթերն ևս (L'Orient և Turquie) յիշում են՝ որ յոյն հօտի մէջ դժգոհներ կան նոր պատրիարքից։

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

Կրօնական բարոյական գաղափարների տարածման նպաստելու և բարեպաշտական զգացումները զարգացնելու համար Ռուսաց մէջ երեք ընկերութիւն կայ՝ երկուսը մայրաքաղաքներում (Պետերբուրգում և Մոսկուայում) և մէկն էլ Կիեւում։ Վերջին ընկերութիւնս կոչուումէ «Ուղղափառութեան նախանձախնդիր եղբայրութիւն սրբոյն Վլադիմիրի»։ Այս ընկերութեան նախընթաց տարուան տեղեկագրից երևումէ՝ որ եղբայրութիւնն աշխատել է կենդանի խօսքի միջոցով և հրատարակութիւններով նպաստել քրիստոնէական ուղիղ գաղափարների տարածման։ Եղբայրութիւնը գործել է աղանդաւորների մանաւանդ Շտունդիստների մէջ և կարողացել է շատերին դարձնել։ Բացի աղանդաւորների վարդապետութիւնների դէմ ուղղուած հրատարակութիւնից ընկերութիւնը պահպանում է 1870 թ. սկսած և մի դպրոց՝ ուր ուսումը ձրիէ։ Բացի սրանից ընկերութիւնը եկեղեցական-ծխական դպրոցներին շատ է նպաստում՝ մի քանիսին աժանագին դասագրեր և կրօնական բարոյական գրքեր մատակարարելով՝ իսկ մի քանիսին էլ ձրի բաշխելով։

Ի՞նչքան կարօտութիւն ունին մեր եկեղեցական-ծխական դպրոցները այսպիսի նպատակով հիմնուած ընկերութիւնների։

— «Ռուսսկոյէ Օբոզրէնի է» ամսագրի մարտի տետրակում խնդիր է յարուցուած եկեղեցական պատկերների և մանաւորապէս «Ռուսալկա» կոչուած սրբոց պատկերների մասին՝ որ վաճառականական արդիւնաբերութիւն է դարձել և ամենայն տարի տասնեակ հազարներով սրբոց պատկերներ է մատակարարում ժողովրդին։ Այս պատկերների նըկարիչներն անկիրթ և անճաշակ մարդիկ են՝ ուստի յաճախ և ըստ մեծի մասին սրբոց պատկերների անունով վաճառ են հանում անճոռնի և անպատշաճ նկարներ։ Ցօդուածի հեղինակ պ. Իլարիանովն իրաւամբ նկատումէ՝ որ գրաքննութեան օրէնքներով ամենայն մի պատկեր՝ գծագրութիւն՝ գիտական հրատարակութիւն ենթարկուումէ գրաքննութեան՝ իսկ սրբոց պատկերների հրատարակութիւնն ազատ է որևէ հսկողութիւնից։

Այդ հսկողութիւնն անշուշտ պէտք է հոգևոր վարչութիւններին պատկանի, որոնք հոգ պիտի տանեն սրբոց պատշաճաւոր պատկերների տարածման մասին։ Հայ հաւատացեալները սովորութիւն չունին իրենց տները սրբոց պատկերներով զարդարելու, ուր որ այդ սովորութիւնը մտել է, պէտք է եկամուտ և խորթ համարել։ Վերջին ժամանակներս հետզհետէ մուտք են գործում մեր եկեղեցիների մէջ բազմաթիւ անճաշակ, մետաղէ և թիթեղէ պատկերների հետ նաև իւղաներկ անճոռնի նկարներ. կարևոր է այս հանգամանքի վերայ առանձին ուշք դարձնել։ Մեր թեմական վարչութիւնների պարտքն է խստիւ ընտրութիւն անել նկարների ու պատկերների և ամենայն մի նուիրուած պատկերով թոյլ չը տալ զարդարելու եկեղեցու պատերը։ այս վերահայեցողութեան առաջնորդող սկզբունքները պիտի լինին մեր սուրբ եկեղեցու աւանդութիւնը (որ օրինակի համար չէ ընդունում ամենևին մետաղէ պատկերներ և արձաններ) և գեղարուեստական ճաշակը։

— Տամբով քաղաքի եկեղեցական-ծխական երկդասեան դպրոցին կից իբրև փորձ բացուած է սրբոց պատկերների նկարչութեան մի վարժոց, ուր դպրոցն աւարտողներից նկարելու ձիրք ունեցողները նկարչութիւն են ուսանում և մասնաւորապէս եկեղեցական նկարչութիւն։

— Ռուսաց հոգևորականութիւնն առանձին հոգ է տանում այժմ վանական միաբանութիւնների մասին, որպէս զի դրանք կարող լինին լուսաւորութեան կենդրոնավայրեր դառնալ։ Այս մտքին համակրում է և մամուլը։ այսպէս Մոսկուայի «Ռուսսկոյէ Սլովոյ» թերթը խօսելով այդ մասին օրինակ է բերում Լէոնիդի կուսանոցը։ որ տասն տարուան ընթացքում ուսուցչուհիների մի ստուար խումբ պատրաստել։ որոնք իրենց անձը նուիրել են գիւղական դասակարգի կրթութեան։ Այս ուսուցչուհիների հիմնած դպրոցները միշտ կապ են պահպանում կուսանոցի հետ և դրանով հետզհետէ զօրանում է վանքի ազդեցութիւնը։

—Ռուսաց թեմական վարչութիւնները ժողովներ են գումարում վանահայրերի և մայրապետների և խորհրդածում վանքերին բարոյական կեանք տալու համար։ Փետրուար ամսին Պսկովի թեմում մի այդպիսի ժողով տեղի ունեցաւ։ ուր վանքերի բարեբարէաց ճառից յետոյ քննութեան առնուեցաւ Փիլարէտի կազմած վանական կանոնագրութիւնը։ Ցարդ տեղի ունեցած ժողովներն հարուստ են բարենպաստակ առաջարկութիւններով։ որոնց իրագործումից մեծ բարիք կարող է ծնել ժողովրդի համար։

— Եկեղեցականութեան յարգը բարձրացնելու համար պէտք է հոգ տանել և այն բանի մասին, որ եկեղեցական չը դառնան այնպիսի անձինք, որոնք թէպէտև պահանջուած ուսումն ունին, բայց զուրկ են կոչումից և արժանաւոր պատկառանք չեն տածում դէպի քահանայութեան վեհ պաշտօնը։ Այս առթիւ խրատական է Դոնի շրջանի թեմական արքեպիսկոպոս Աթանասի վարմունքը։ Այդ թեմի հոգևոր դպրոցում աւարտած մի սարկաւագ քահանայութեան իրաւունք ստացած լինելով ներկայացաւ առաջնորդին քննուելու։ թեթև քննութիւնից երևեցաւ։ որ հոգևոր դպրոցի աշակերտ և քահանայացու սարկաւագը «հաւատամքն» անգիր չը գիտէր։ Թեմական առաջնորդն հրամայեց այդ քահանայութեան տեղը մի ուրիշին յատկացնել և այդ մասին յայտարարել ամբողջ թեմում ի զգուշութիւն քահանայացուների։

— Ռուսաց «Եկեղեցական Համբաւարերը» իւր № 13. յառաջ է բերում ազգիս Վեհափառ Կաթուղիկոսի խօսած ճառը մամուլի մասին։ Վեհափառ Հայրապետը այդ ճառը խօսել է Նոր-Նախիջևանում «Պրիաղովսկիյ Կրայ» թերթի խմբագրութեան անդամներին։ որոնք բազդ էին ունեցել Նորին Սրբութեան աջն առնելու։ Հայրիկի խօսքերը մերձաւորապէս հետևեալ միտքն ունին. «Հին ժամանակ կային մարգարէներ և առաքեալներ։ որոնք ժողովրդին ուսուցանում էին բարին ու ճշմարիտը և իրենց հզօր լեզուով զգուշացնում էին սպառնացող վտանգներից։ Այժմ չը կան այլ ևս ոչ մարգարէք և ոչ առաքեալներ։ իսկ նրանց գործն ստանձնել են լրագրողներն ու հրապարակախօսները։ Այս հանգամանքներում քրիստոնէական ոգւով ներշնչուած հրապարակախօսութիւնը կարող է մեծ օգուտներ տալ։ մինչ նա կործանիչ ազդեցութիւն կունենայ։ եթէ թողած ճշմարտութիւնն այլ [illegible] երկրպագէ»։ Ռուսաց եկեղեցու բերանը բացատրում է այս մեծիմաստ խօսքերն և մի քանի օրինակներով պարզաբանում [illegible] մամուլի ընթացքը և վերջն աւելացնում է. «Ի նչ դառն հեգնութիւն է հնչում այս խօսքերից՝ թէ «լրագրողներն և հրապարակագիրներն այժմ այն են կատարում։ ինչ որ կատարել են հնումն առաքեալներն ու մարգարէք։ որոնք մարդկանց բարի՞ն էին ուսուցանում»։ Թէ Հայրիկի խօսքերն երկսայրի գովասանքներ են։ այդ շատ պարզ է և թէ այժմ հեգնութեան պէս է հնչում այդ մեծ գովասանքը։ որ ազգիս Հայրապետը տուել է մամուլին։ նոյնպէս ճշմարիտ է։ սակայն Հայրիկը մարդկութեան յառաջադիմութեան անպայման հաւատում է։ ուստի և առանց վարանելու Նա այն-

քան վեհ պաշտօն է սահմանում հրապարակագրութեան, որի մէջ այսօր շատ սուտ մարգարէք և կեղծ ու անարժան առաքեալներ են գործում, որոնց անհետ կորուստը նոյնքան հաւաստի է, որքան և սուտ մարգարէից և կեղծ առաքեալներին է եղել։

ԲՈԼՂԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

Բոլղարական օրթոդոքս եկեղեցին, որ այժմ ունի իւր սեփական ազգային պատրիարքութիւնը, որի գլուխն իսկապէս Էքզարխոս է կոչուում, այս տարի ծանեց իւր անկախութեան 25-ամեայ յօբելեանը։ Տօնախմբութեանն մասնակցել են երկրի իշխանից սկսած մինչև վերջին գիւղացին։ Սոֆիա քաղաքի խորհրդարանը ի յիշատակ յօբելեանի հիմնել է մի որբանոց, իսկ բոլղարական սինոդը թոշակներ է նշանակել բարձրագոյն հոգևոր կրթութիւն ստանալ ցանկացողների համար։

3. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

Քէնտրբուրիի արքեպիսկոպոսը մի բաց նամակով բողոքել է Լևոն ԺԳ. պապի այն ջանքի դէմ, որով կամենում է կրկին կապ հաստատել անգլիական և պապական եկեղեցիների մէջ։ Վատիկանի շրջանների այն կուսակցութեան վերայ, որ չէ համակրում պապի միաբարական ձգտումներին, այս շրջաբերականը մեծ տպաւորութիւն է գործել։ Այսու ամենայնիւ պապը վճռել է հրատարակել այն կոնդակը, որով պիտի Անգլիացոց հրաւիրէ ս. Պետրոսի փարախը։ Այս թուղթը պէտք է Անգլիական կաթոլիկներին ուղղուած մի շրջաբերականի ձև ունենայ։ Պապն այժմ եռանդով աշխատում է այդ թղթի խմբագրութեան վերայ, որ երևի մի անուղղակի պատասխան կը լինի Քէնտրբուրիի արքեպիսկոպոսին։

— Մեծ պասի ընթացքում անգլիական եպիսկոպոսները սովորութիւն ունին շրջաբերական կոնդակներով դիմել իրենց հօտին և ժամանակին յարմար խրատներ կարդալ։ Այս սովորութիւնը, որ շատ հին է և գոյութիւն ունի բոլոր հնագոյն եկեղեցիներում, այժմ ամենից յաճախ գործ է դրուում կաթոլիկ և անգլիական եպիսկոպոսներից։ Անցած մեծ պասին Եորքի արքեպիսկոպոսն իւր շրջաբերականում մի քանի խրատներ տալուց յետոյ՝ մարքերի և սրաների բարոյական հանգստութեան համար խորհուրդ է տալիս մի առ ժամանակ հեռու մնալ օրական բորբոքուած խնդիրներից և խոյս տալ դրանց մասին հրատարակուած յօդուածներ և գրքերի ընթերցումից։

Ն. Ք.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

«Ի ՄՈՎՍԷՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՆԷՆ»

(Ցաւելուած Արարատի Բ.)

Հայոց նախնի պատմագրութեան մի քանի յիշատակարանները նոյնութեամբ հասած չեն մեզ։ Ագաթանգեղոսի պատմութիւնն իւր սկզբնական խմբագրութիւնից զանազանուում է իւր յաւելումներով և յապաւումներով։ Փաւստոսի պատմութեան սկիզբն և վերջը թերի է։ Եղիշէի պատմութեան գրքից պակասել է մի ամբողջ շրջանի նկարագիր, որն երբեմն գտնուել է նորա մէջ, (մենք առիթ կունենանք մի այլ անգամ այս մասին մանրամասն խօսելու)։ Նոյն վիճակին է հանդիպել և Մովսէս Խորենացու պատմութիւնը։ Կան շատ ցուցումներ, որոնցից երևում է, որ Մովսէսի պատմութիւնը թերի է հասել մեր ձեռքը։ Նախ որ այդ գիրքը բաղկացած է եղել չորս դպրութիւնից[1] իսկ մեզ հասել է միայն երեքը։ Երկրորդ որ Մովսէս իւր պատմութիւնը գրել է «սկսեալ յԱդամայ մինչև ի կայսր Զենոն»[2]. այսինքն մինչև 491 թուականը։ Մինչդեռ այժմեան նորա գրքի պարունակութիւնն է Ադամից մինչև Ս. Թարգմանիչների մահը՝ այն է 440 թուականը։ Երրորդ որ արդէն յայտնուել է նորա պատմութեան կորած մասերից մի հատուած՝ այն է Տրդատ արքայի յուղարկաւորութեան նկարագիրը, որի մասին տեղեկութիւն է տալիս Թովմա Արծրունին[3] և որն հրատարակուեցաւ 1851 թուին Վենետիկի Բազմավէպում։ Եւ չորրորդ՝ որ Խորենացու պատմութեան երրորդ գրքի մէջ պակաս է Մուշեղ և Մանուէլ Մամիկոնեան զօրավարների եօթնամեայ ժամանակի նկարագիրը, որ մանրամասն հաղորդում է Փաւստոս։ քանի որ Մովսէսի պատմութեան բովանդակութիւնը, թէև այլ ոգւով պատմած, համաձայն է Փաւստոսի պատմութեանը, անշուշտ նոցա երկուսի բովանդակութեան մէջ եղեւցած տարբերութեան պատճառն այն է,

1. Տես Թովմա Արծրունի, պատմութիւն, եր. 9 եւ 76 Ս. Պետերբուրգ. տպ.

2. Նոյն եր. 76.

3. Նոյն եր. 58.